Արձանագրություն N 2

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/14-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան «07» մարտի 2022թ.
ժ. 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Տիգրան Պետրոսյան,
Անդամներ՝ Ջուլիետա Բաբայան, Գոհար Հախինյան,
Քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյան

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/14-Ք» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
« Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ	ք.Երևան, Շինարարների15/1 հեռ. +37410392407
«Արտաշես Սահակյան» ԱՁ	Թբիլիսյան խճ. 35/1 50բն հեռ. 044188858

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին**

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	տեքստիլի մաքրման ծառայություն	2 000 000	«Արտաշես Սահակյան» ԱՁ	1 977 500	1 977 500
			« Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ	2 250 000	2 700 000

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

ա) «Արտաշես Սահակյան» ԱՁ-ի ներկայացրած դիմում-հայտարարությունում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ անվանումը չի համապատասխանում իրավական գրանցման անվանմանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. Հանձնաժողովի որոշման մասին

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձնաժողովը որոշեց.

Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Արտաշես Սահակյան» ԱՁ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթուղթը:

Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-22/14-Ք ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյանին.

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Տիգրան Պետրոսյան

անդամներ՝ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Գոհար Հախինյան

քարտուղար՝ _____ Ազնիվ Քոթանջյանին